



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 սեպտեմբերի 2014 թվականի N Մ - 848 - Ա
քաղ. Երևան

**«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ԳՅՈՒՂԻ 360
ԱՇԱԿԵՐՏԻ ՀԱՄԱՐ ՆՈՐ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ՏԱՐԱԾՔԻ
ԱՍՖԱԼՏԱՊԱՏՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի օգոստոսի 26-ի N 07/80-2/12873-14 և օգոստոսի 25-ի N 03/3-3/12770-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի օգոստոսի 23-ի N 02/6170-14, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2014 թվականի օգոստոսի 23-ի N 01/07.1/9657-14 ու Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2014 թվականի օգոստոսի 25-ի N 01/4043-13 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.**

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 32,287,500 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք գյուղի 360 աշակերտի համար նոր միջնակարգ դպրոցի տարածքի ասֆալտապատում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Մերձմուկուվյան» ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05800698) 2014 թվականի օգոստոսի 4-ին կնքված N ՀՀ/ԱԴԱ-1/14 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ասֆալտապատման աշխատանքների իրականացում՝ 32,287,500 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ